ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը Ֆրանսիայի Ազգային Ժողովի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման առիթով մայիսի 30-ին Նյու Յորքից շնորհակալական նամակ է հղել Ֆրանսիայի Ազգային Ժողովի նախագահ Լորան Ֆաբիուսին՝ արտահայտելով իր գոհունակությունը ընդունված որոշման համար:

Նամակում մասնավորապես ասվում է.

«Մեծ հրճվանքով և խոր գոհունակությամբ իմացանք, որ Ֆրանսիական Հանրապետության Ազգային Ժողովը, 1998-ի մայիսի 29-ին, ձեր նախագահությամբ կայացած նիստին, պաշտոնապես ճանաչեց 1915-ին կատարված հայերի ցեղասպանությունը:

Հայ Եկեղեցու Հոգևոր Պետի հանգամանքով, հանուն թեմական արքեպիսկոպոսների և համայն հայ հավատացյալների ի Հայաստան, ի Լեռնային Ղարաբաղ և ի սփյուռս աշխարհի, ձեզ ենք ներկայացնում մեր խոր երախտագիտությունը և բարձր գնահատանքը Ազգային Ժողովի պատմական որոշման համար, որն արտահայտում է ճշմարտության վկայելու իմաստությունն ու քաջությունը հօգուտ արդարության դատին:

Ազգային Ժողովի որոշումը ուրախացրեց ոչ միայն հայկական ծագում ունեցող ձեր քաղաքացիներին, այլև ամբողջ հայ ժողովրդին, որը երախտապարտ է Ազգային Ժողովի արդար և արժանի որոշման համար:

Խնդրում ենք ներկայացնել մեր ջերմագին շնորհակալությունները Ազգային Ժողովի անդամներին և մեր աղոթքներն ու օրհնությունները՝ ձեր կատարած ազնիվ գործի համար, ի բարգավաճումն ու հառաջադիմություն Ֆրանսիայի, որ միշտ մոտ է եղել մեր՝ հայերիս, քրիստոնեական հավատքով ու եվրոպական ոգով թաթախված հոգուն:

Հաճեցեք ընդունել, պր. նախագահ, մեր աղոթքներն ու բարձր գնահատությունը, մեր լավագույն մաղթանքները՝ Ազգային Ժողովին և ֆրանսիացի ժողովրդին»:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ